ԱԳԱՐԱԿԱՃՈՐ

- Բնակավայրի վարչական ղեկավար՝ ԿարենՄարտիրոսյան
- Հեռախոս՝ +37498 05 67 78
- Բնակչության թիվը՝ 1403 մարդ, 01.01.2021-ի դրությամբ

Արենի համայնքի բնակավայր հանդիսացող Ագարակաձոր գյուղը գտնվում է մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից մոտ 3կմ հարավ, Արփա գետի ձախ ափին, նրա վտակ Ագարակաձորի գետաբերանի շրջանում:
Երևան քաղաքից հեռավորությունը 119կմ է: Ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը կազմում է 1120մ: Կլիման մերձարևադարձային է՝ չոր, ցամաքային, ամառները՝ շոգ, ձմեռները՝ ցուրտ: Տարեկան տեղումների քանակը 300-350մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ և չոր տափաստաններ են, որոնք վերամշակվել են՝ վերածվելով մշակվող-ոռոգելի լանդշաֆտների:

Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբին, թեպետ հիշատակվում է նաև 12-13-րդ դարերի մասին: Նախկինում գյուղն ունեցել է Այար, Ագյար անվանումները: Վերանվանվել է 1946 թվականին: Այն պատմականորեն եղել է Օրբելյանների կալվածքը (պատմական այս ժամանակահատվածը դիտվում է որպես Վայոց ձորի ամենածաղկուն շրջանը):

Տնտեսական կյանքի և առևտրի զարգացման համար մեծ նշանակություն տալով ճանապարհաշինությանը, Տարասայիճ Օրբելյանը (13-րդ դար) կառուցել է մի քանի քարավանատներ և կամուրջներ, այդ թվում նաև Ագարակաձորի կամուրջը, որը կանգուն է և գործում է առ այսօր: Այժմ այդ կամրջի միջոցով են Եղեգնաձոր քաղաքի հետ կապ հաստատում Արփա գետի ձախափնյա շատ գյուղեր:

Բնակչությունը ներգաղթել է ռուս-պարսկական պատերազմի տարիներին Պարսկաստանի Խոյ, Սալմաստ գավառներից, ինչպես նաև Մակուից: 1838թ.-ին ունեցել է 216, 1980թ.-ին ՝ 930, 2001թ.-ին՝ 1204 բնակիչ: 2011թ.-ի դրությամբ Ագարակաձոր համայնքի բնակչությունը կազմում է 1508 բնակիչ: Համայնքն ունի 340 տնտեսություն:

Համայնքի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հացահատիկի, կերային և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ և անասնապահությամբ, բուծելով խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Արոտավայրերը զբաղեցնում են 912հա տարածք: Պահուստային հողերը յուրացվում և օգտագործվում են որպես վարելահողեր:

Գյուղում գործում է քարի մշակման երկու արտադրամաս, օգտագործվում է Գնիշիկից և Սիսիանից բերված հումքը: Ագարակաձորն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժկետ:

2002 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հերհեր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 52 հուշարձան: